ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԵԴ - 06 - 2024
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «25» «03» 2024 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Արարատի երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության նախագահ Գևորգ Մարգարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2323-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի հունվարի 10-ի N 09-Ա/2 հրամանով հաստատված «Երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի (առողջ և անվտանգ սննդի օգտագործումը, ֆիզիկական ակտիվությունը, անվտանգ վարքագծի պահպանումը, վնասնածքների կանխարգելումը, ծխախոտի, ալկոհոլի, թմրանյութերի օգտագործումից զերծ մնալը) խթանմանն ուղղված միջոցառումների կազմակերպում և համանման նախաձեռնությունների խրախուսում» միջոցառման շրջանակներում դրամաշնորհի հատկացման մրցույթի հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 28-ի նիստի 05 արձանագրությունը՝ որոշման «1115. Երիտասարդության ծրագիր» ծրագրի «11001. Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված միջոցառումներ» միջոցառման (տող՝ «Երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի (առողջ և անվտանգ սննդի օգտագործումը, ֆիզիկական ակտիվությունը, անվտանգ վարքագծի պահպանումը, վնասնածքների կանխարգելումը, ծխախոտի, ալկոհոլի, թմրանյութերի օգտագործումից զերծ մնալը) խթանմանն ուղղված միջոցառումների կազմակերպում և համանման նախաձեռնությունների խրախուսում») շրջանակներում «Արարատի երիտասարդները հանուն առողջ ապրելակերպի» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳԻՆԸ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1.-ին կետով սահմանված կարգով կազմակերպությանը

հատկացնել որոշմամբ նախատեսված գումարից 2140.3 հազար (երկու միլիոն հարյուր քառասուն հազար երեք հարյուր) դրամ՝ համաձայն Հավելված N 2-ի, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի Հավելված N 1-ում, իսկ ծրագրի նկարագիրը՝ Հավելված N 3-ում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2.-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3.-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կատարողի կողմից սույն պայմանագրով նախատեսված ծրագրի ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում համապատասխան չափով նվազեցնել ֆինանսավորումը,

2.1.6. սույն պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ ծրագրի արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված ծրագրի արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. իրականացված ծրագրի արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված ծրագրի մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել սույն պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված ծրագիրը համապատասխանում է սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.2. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան հաշվառում,

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6. պետական մարմնի կողմից ծրագրի իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի

Կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.7. ծրագրի իրականացման մասին իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում (ներառյալ ազդագրերը, հրավիրատոմսերը, մամուլի հրապարակումները և այլն), ինչպես նաև ծրագրի իրականացման մասին իրազեկմանն ուղղված ցանկացած գրավոր և/կամ բանավոր խոսքում հրապարակել պետական մարմնի անունը (որպես ֆինանսավորող կողմ), իսկ համաֆինանսավորման դեպքում՝ պետական մարմնին տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության(ների), ֆինանսավորման չափի և վերջինիս(ներիս) հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.8. սույն պայմանագրից բխող ծրագիրը չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 1.1.-ին կետում նախատեսված գումարի 5.0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.9. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել Աշխատանքային օրենսգրքով, ինչպես նաև «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.10. սույն պայմանագրի 7.1.-ին կետով սահմանված ժամկետներում պաշտոնական գրությամբ պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 4-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար: Բովանդակային հաշվետվությամբ ներկայացվում է ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման, հրապարակման և ընթացքի, այդ թվում՝ արդյունքների գնահատման, մասնակիցների քանակի վերաբերյալ, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլն, ներառյալ՝ իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում պետական մարմնի (որպես ֆինանսավորող կողմ) վերաբերյալ այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով՝ համաձայն հավելված N 5-ի: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում բովանդակային հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար:

2.4.11. սույն պայմանագրով սահմանված ծրագրի իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

3. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

3.1. Պետական մարմիը ծրագրի իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև սույն պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.minfin.am հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (Հավելված N 6) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2. Եթե իրականացված ծրագիրը համապատասխանում է սույն պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1.-ին կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3. Եթե իրականացված ծրագիրը կամ դրա մի մասը չի համապատասխանում սույն պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և սույն պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4. Եթե սույն պայմանագրի 4.2.-րդ կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում սույն պայմանագրի 4.1.-ին կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.2.-րդ կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող

աշխատանքային օրը պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1.-ին կետում սահմանված գումարի 80%-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո, ապրիլ ամսին, իսկ 20%-ը՝ սույն պայմանագրի 4.1.-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

5.2. Համաձայն «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2024 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

5.3. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված գումարի չափը կարող է փոփոխվել սույն պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժերը վերաբերում են պետական մարմնին ներկայացվող ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ բովանդակային հաշվետվություններից յուրաքանչյուրին:

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել ծրագրի իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով:

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

7.1. Սույն պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը մինչև 2024 թվականի հոկտեմբերի 31-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը:

7.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7.3. Սույն պայմանագրով նախատեսված Կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանի լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով

փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.2.Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www.escs.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինն այն ուղարկում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.3. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.4. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.5. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Արարատի երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ
Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2	Արարատի մարզ, Արարատ խոշորացված համայնք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732	Հ/Հ 1510010630650666, ՀՎՀՀ 04233431
	araratyouthcenter@gmail.com
Գլխավոր քարտուղար՝	Նախագահ՝
Հ. Հակոբյան	Գ. Մարգարյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	

Հավելված 1
«25» «03» 2024 թ.
N ԵԴ-06 2024 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

N N ը/կ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	անվանումը	նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	միջոցառման իրականացման վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (հազար դրամ)
1	Առողջ ապրելակերպի դասընթացների կազմակերպման միջոցառումների շարք	Կազմակերպել 4 մասնագիտական վերապատրաստման դասընթաց Արարատի մարզի առնվազն 50 երիտասարդների համար առողջ սննդակարգի, ֆիզիկական ակտիվության, վնասակար սովորությունների զերծ մնալու և վնասվածքների կանխարգելման թեմաներով:	Դասընթացի տեղեկատվության տարածում, մասնակիցների գրանցում, տվյալների վերլուծություն, դասընթացի կազմակերպում, ծրագրի մոնիթորինգ և գնահատում:	Ծրագրի իրականացման արդյունքում թվով առնվազն 50 երիտասարդ ապրիլից սեպտեմբեր ամիսների ընթացքում կմասնակցի ընդհանուր 315 ժամ տևողությամբ դասընթացների, կստանա մասնագիտական գիտելիքներ և կտիրապետի առողջ ապրելակերպի բաղադրիչներին, ինչպես նաև տեղեկատվության տարածման գործիքակազմին	30.09.2024 թ.	30.11.2024թ.	**1783.6**
2	Իրազեկման արշավների նախապատրաստական փուլ ֆոկուս խմբերում մենթորների հետ	Վերապատրաստման դասընթացների արդյունքում լավագույն գիտելիքներ ստացած անձնակազմից ընտրված թվով 20 մասնակից երիտասարդ կամավորների հետ ձևավորել տեղեկատվական նյութեր իրազեկման նպատակով	2 ֆոկուս խմբերում աշխատանքի կազմակերպում, տեղեկատվական նյութերի և 215 ք/մ տպագրական նյութերի կազմում:	Արդյունքում հուլիս և օգոստոս ամիսներին ունենում ենք 2 թիմային հանդիպում թվով 20 մասնակցի հետ, որի ընթացքում ստացած մասնագիտական գիտելքիների և իրազեկման նյութերի հիման վրա կազմվում է իրազեկման արշավի պլան:	15.08.2024թ.	30.11.2024թ	
3	Իրազեկման արշավների կազմակերպում	Օգոստոսի 12-ին երիտասարդության միջազգային օրվան նվիրված, սեպտեմբերի 21-ին անկախության օրվան նվիրված և հոկտմբերի 22-ին քաղաքի օրվան նվիրված միջոցառումների ընթացքում քաղաքային զբոսայգում տեղադրված վրան/տենտեր-ով	Վրան/տենտերի տեղադրում, տեղեկատվական նյութերի ապահովում, իրազեկման արշավի ամողջական կազմակերպում:	Ստացված ամբողջ տեղեկատվության, պաստառների, իրազեկման նյութերի տարածում հասարակության լայն շրջանակներին, ծրագրի տեսանելիության ապահովում:	30.10.2024թ.	30.11.2024թ	

		կազմակերպում					
4	Բակային խաղերի կազմակերպան միջոցով իրազեկման արշավի իրականացում	Արարատ խոշորացված համայնքի շենքերի բակում նախապես հայտարարված խաղերի կազմակերպում, զուգահեռ առողջ ապրելակերպի խթանման արշավի իրականացում	Հայտարարությունների տեղադրում, խաղերի կազմակերպում, պաստառների տեղադրում,ամբողջական միջոցառման իրականացում:	Արդյունքում հուլիսից-սեպտեմբեր ամիսների ընթացքում կազմակերպվում են 3 բակային խաղեր՝ (նվազագույնը 4 ավանդական խաղեր) ընդհանուր նվազագույնը 50 մասնակցի համար, որի ընթացքում ծրագրի նպատակները և ձեռք բերված տեղեկատվությունը հասանալի կդառնա նաև համայնքի ոչ շատ ակտիվ բնակիչներին:	31.08.2024թ	30.11.2024թ	
5	Ծրագրի հաշվետվության կազմում և ներկայացում	Ծրագրի արդյունքների, սահմանված խնդիրների և նպատակների մասին հաշվետվության ներկայացում:	Ծրագրի ամբողջ ընթացքի մասին տվյալների մշակում, մոնիթորինգի իրականացում, հաշվետվության կազմում:	Արդյունքում ներկայացնել ծրագրի սահմանված խնդիրների կատրման և նպատակների իրականացման գործընթացը:	30.11.2024թ.	30.11.2024թ.	
	Ընդամենը՝						**1783.6**
	ԱԱՀ						**356,7**
	Ամբողջը						**2140.3**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Արարատի երիտասարդական նախաձեռնությունների
կենտրոն» ՀԿ
Արարատի մարզ, Արարատ խոշորացված համայնք
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510010630650666, ՀՎՀՀ 04233431
araratyouthcenter@gmail.com
Նախագահ՝
Գ. Մարգարյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
«25» «03» 2024 թ.
N ԵԴ-06- 2024 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Արարատի երիտասարդները հանուն առողջ ապրելակերպի» ծրագրի

	Ծախսատեսակի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի արժեքը (հազար դրամ)	Գումարը (հազար դրամ)
1	**Աշխատավարձ (ներառյալ հարկերը)***				
1.1	Ծրագրի համակարգող	ամիս	3	92.0	276.0
1.2	Դասընթացավար	ժամ	90	2.8	252.0
1.3	Դասընթացավար	ժամ	225	2.7	607.5
	ԸՆԴԱՄԵՆԸ 1				**1135.5**
2	**Տպագրական ծառայություններ՝**				
2.1	Պաստառների տպագրություն (215 քմ x 2.1 հազ. դրամ)	հատ	1	451.5	451.5
	ԸՆԴԱՄԵՆԸ 2				**451.5**
3	**Վարչական ծախսեր՝ այդ թվում**				
3.1	Ինտերնետ ծառայության վճար	ամիս	7	6.65	46.6
3.2	Հաշվապահական ծառայության ձեռքբերում (6 ամիս x 25.0 հազ. դրամ)	հատ	1	150.0	150.0
	ԸՆԴԱՄԵՆԸ 3				**196.6**
	ԸՆԴԱՄԵՆԸ				**1783.6**
	ԱԱՀ**				**356.7**
	ԱՄԲՈՂՋԸ				**2140.3**

* Ծախսերը պետք է իրականացվեն բացառապես ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով

** ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
_____ Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Արարատի երիտասարդական
նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ
Արարատի մարզ, Արարատ խոշորացված
համայնք
araratyouthcenter@gmail.com
«Արարատբանկ» ԲԲԸ,
Հ/Հ 1510010630650666, ՀՎՀՀ 04233431
Նախագահ՝ _____ Գ. Մարգարյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված 3
«25» «03» 2024 թ.
N ԵԴ-06 2024 պայմանագրի

«Արարատի երիտասարդները հանուն առողջ ապրելակերպի»
դրամաշնորհային ծրագիր

Տիտղոսաթերթ

Կազմակերպության անունը «Արարատի երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպություն
Հապավումը (եթե առկա է)
Ծրագրի անվանումը «Արարատի երիտասարդները հանուն առողջ ապրելակերպի»
Ծրագրի սկիզբ / ավարտ (օր/ամիս/տարի)[1] «01» «ապրիլ» 2024թ.- «30» «հոկտեմբեր» 2024թ.
Ծրագրի իրականացման վայրը/ աշխարհագրությունը (մարզ, համայնք) Արարատի մարզ, Արարատ խոշորացված համայնք
Կազմակերպության ղեկավար (անուն, հեռախոս, էլ. փոստ) Գևորգ, 095-33-55-11, gevorgmargaryan1985@gmail.com
Ծրագրի ղեկավար/համակարգող (անուն, հեռախոս, էլ. փոստ) Գևորգ, 095-33-55-11, gevorgmargaryan1985@gmail.com
Կազմակերպության գործունեության հասցեն և կոնտակտային տվյալները (հեռախոս, ֆաքս և էլ.փոստ) ՀՀ, Արարատի մարզ, ք. Արարատ, Շահումյան փող, 24/1, 095-33-55-11, araratyouthcenter@gmail.com
Ծրագրի բյուջե (ՀՀ դրամ)[2] 2140300 (երկու միլիոն հարյուր քառասուն հազար երեք հարյուր) դրամ

Համառոտագիր

Ներկայացրեք ծրագրի ամփոփ նկարագիրը:

«Արարատի երիտասարդները հանուն առողջ ապրելակերպի» ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել մի շարք միջոցառումներ, որոնք միտված են առողջ ապրելակերպի խթանմանը, այն դարձնելով սովորույթ, ապրելակերպ և շարունակական առօրյա: Ծրագրի ընթացքում հիմնական շեշտը դրվելու է մասնագիտական սեմինար-քննարկումների միջոցով երիտասարդների վերապատրաստման և ստացած գիտելիքների իրացման վրա: Նախատեսվում է համապատասխան մասնագետների կողմից կազմակերպել վերապատրաստման դասընթացներ և մասնակիցներից ձևավորել ֆոկուս խմբեր, պատրաստել տեղեկատվական բազմազան նյութեր և իրականացնել իրազեկման արշավներ, որից հետո կազմակերպել բակային ավանդական խաղեր, որի ընթացքում ֆիզիկական ակտիվության խրախուսմանը զուգահեռ ևս իրականացնել տեղեկատվական ֆլեշմոբ: Ծրագրի ձևաչափի ընտրությունը պայմանավորված է հնարավորինս մեծ մասնակցայնություն ապահովելու և թիրախային աշխատանքի նպատակով:

Ծրագրի նկարագրություն

Հիմնախնդրի և կարիքի հիմնավորում

---

[1] Ծրագրի մեկնարկը՝ 2024 թվականի բյուջետային տարվա երկրորդ եռամսյակ: Ծրագրի իրականացման և հաշվետվությունների ներկայացման վերջնաժամկետը՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի առաջին տասնօրյակը:
2 Ծրագրի բյուջեով արգելվում են կապիտալ բնույթի ծախսերը:

Նկարագրեք ներկա վիճակը և հիմնավորեք՝ ինչու է անհրաժեշտ ծրագիրը:

Ծրագրի նախապատրաստական փուլում մեր կողմից իրականացվել են ուսումնասիրություններ, տեղի են ունեցել հանդիպումներ և քննարկումներ երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի, առողջ սննդակարգի, ֆիզիկական ակտիվության խթանման և վնասակար սովորություններից զերծ մնալուն ուղղված միջոցառումների անհրաժեշտության մասին: Քննարկումների ընթացքում հավաքական կարծիք է ձևավորվել, որ համայնքում առկա են բազմաթիվ խնդիրներ վերոնշյալ թեմաներով բավարար ցուցանիշներ ունենալու համար: Ներկա իրավիճակում երիտասարդությունը չունի համապատասխան մասնագիտական գիտելիքներ առողջ ապրելակերպի մասին, որն ազդում է նրանց առողջ կենսակերպի վրա: Առկա է իրազեկման և միջավայրի ձևավորման խնդիր, ինչը նույնպես ազդում է առողջ ապրելակերպը որպես սովորույթ դարձնելու գործում: Ծրագրի անհրաժեշտությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ ծրագրի մասնակից երիտասարդները ոչ միայն ստանալու են անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ, այլ նաև իրազեկման արշավների միջոցով այն տարածելու են հասարակության ավելի լայն շրջանակներում, ինչպես նաև խրախուսելու են շարունակական ֆիզիկական ակտիվությունը բակային խաղերի միջոցով:

Կազմակերպության փորձառությունը

Ներկայացրեք կազմակերպության առաքելությունը և նպատակները, ինչպես նաև նշված ոլորտում իրականացված ծրագրերը (ժամանակահատված, դրամաշնորհատու կազմակերպություն, բյուջե, նպատակ, արդյունքներ):

«Արարատի երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 26.04.2019թ., որպես գործունեության նպատակ սահմանելով երիտասարդների ներգրավվածության ապահովումը քաղաքացիական հասարակության զարգացման, զբաղվածության և ներուժի բացահայտման խթանման և բիզնես միջավայրի ձևավորման, առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված միջոցառումների իրականացման, կրթական մակարդակի բարձրացման, բնապահպանական ծրագրերի իրականացման, տեղեկացվածության մակարդակի բարձրացման, մարզական և մշակութային կյանքի ակտիվացմանն ուղղված և մարզային տուրիզմի զարգացման գործում:

Հիմնադրման օրվանից կազմակերպությունը չի ստացել որևէ դրամաշնորհ կամ այլ ֆինանսավորում, սակայն իրականացրել է մի շարք ծրագրեր, այդ թվում.

- Համաքաղաքային ծառատունկ (27.04.2019թ. Քաղաքացու օրվան նվիրված միջոցառումների շարք)
- Հանրային քննարկում (27.04.2019թ. Քաղաքացու օրվան նվիրված միջոցառումների շարք)
- Ճանաչողական արշավ (26.05.2019թ. Հայրենաճանաչության միջոցառումների շարք)
- Կրթական դասընթաց-սեմինար (02.06.2019թ. Թեմա՝ կարողությունների զարգացում)
- Համայնքային ծառատունկ (28.03.2021թ.)
- «Հերոսների Պուրակ»-ի ստեղծում նախաձեռնության ակտիվ մասնակցություն (ապրիլ2021թ. - նոյեմբեր 2021թ.)
- Համայնքային ցուցահանդես փառատոնի կազմակերպում (22.10.2021թ.)
- Հեծանվային մարաթոն (12.08.2022թ. երիտասարդության միջազգային օր՝ առողջ ապրելակերպ)
- «Երիտասարդությունը, թվային տեխնոլոգիաները և դրանց հոգեբանական ազդեցությունը» խորագրով դասընթաց-սեմինար (24.04.2023թ.)
- «Հանդիպում ժամանակակից գրողների հետ» գրական ցերեկույթ (09.05.2023թ.)
- ***«Առողջ կենսակերպը գալիս է Արարատ» մասնագիտական քննարկում դասընթաց (14,07,2023)***
- ***«Արարատի երիտասարդները հանուն առողջ ապրելակերպի» աշխատանք ֆոկուս խմբերում, հեծանվարշավ, երիտասարդական ֆորում (12.08.2023թ,)***
- ***«Բակային խաղեր ՈԿՖ բանավանում» խրախուսելով ֆիզիկական ակտիվությունը (18,08,2023)***
- ***«Բակային խաղեր Արարատ քաղաքում խրախուսելով Ֆիզիկական ակտիվությունը (25,08,2023)***
- ***«Խրախուսական արշավ դեպի Զանգակատուն» քայլարշավ, զբոսաշրջային վայրերի բացահայտում (27.08,2023թ,)***
- «Ֆուտբոլային խաղի բացօթյա ցուցադրություն» (08,09,2023)
- «Գովազդային պաստառների մնացորդների մաքրման և հեռացման աշխատանքներ» (15,09,20203)
- «Ամանորյա ցուցահանդես-տոնավաճառի կազմակերպում» (22,12,2023)

Արդյունքում սահմանվածնպատակներն իրականացնելիս, կազմակերպությունը լավ ճանաչում է ձեռք բերելիամայնքում, ինչպես ՏԻՄ կառույցների, այնպես էլ մասնավոր հատվածի հետ համագործակցելիս:

Այս բոլոր միջոցառումները իրականացվել են կանոնադրական նպատակներին համահունչ և ապահովել են բավարար արդյունք մասնակիցների համար:

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

Համառոտ կերպով նկարագրել՝ որն է ծրագրի նպատակը և ինչ արդյունքներ են ակնկալվում ծրագրի ավարտին:

«Արարատի երիտասարդները հանուն առողջ ապրելակերպի» ծրագրի նպատակն է ներգրավվել ակտիվ երիտասարդների՝ այդ թվում ուսանողների, ովքեր պատրաստակամ են ստանալ նոր գիտելիքներ, կիսվել իրենց փորձով և բոլոր հնարավոր միջոցներով իրազեկել առողջ ապրելակերպը՝ այն դարձնելով կենսակերպ և սովորույթ: Արդյունքում ակնկալվում է, որ բազմաթիվ երիտասարդներ կունենան բավարար գիտելիքներ և տեղեկատվություն, կլինեն իրազեկված և կտարածեն առողջ ապրելակերպը իրենց շրջապատում:

Գործողություններ

Որոնք են այն կոնկրետ գործողությունները և մեթոդները ծրագրի նպատակի իրագործմանն ուղղված յուրաքանչյուր խնդրի համար: Ներկայացնել ամսական կտրվածքով աշխատանքային պլան ՝ համաձայն ստորև ներկայացված ձևաչափի

Նախատեսվում է կազմակերպել վերապատրաստման դասընթացներ ներգրավվելով համապատասխան մասնագետների: Այնուհետև ձևավորել ֆոկուս խմբեր և ստացած գիտելիքների հիման վրա կազմել և պատրաստել տեղեկատվական նյութեր: Իրականացնել իրազեկման արշավներ հանրային վայրերում: Կազմակերպել և անցկացնել բակային խաղեր զուգահեռ իրականացնելով իրազեկում:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Կազմակերպություն «Արարատի երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպություն
Ծրագիր «Արարատի երիտասարդները հանուն առողջ ապրելակերպի»
Ժամանակահատված *01.04.2024թ.-30.10.2024թ.*

Հ/Հ	Գործողություն	Պատասխանատու	Ամիս											
			1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Մասնագիտական վերապատրաստման դասընթացների գրանցման փուլ Մասնակիցների նախնական հայտագրումն արդեն իրականացված է, ծրագրի սկզբում հայտարարություն կտեղադրվի սոցիալական ցանցում՝ ապահովելով ավելի մեծ մասնակցայնություն, առկա է նախնական պայմանավորվածություն նաև ՏԻՄ-ի և այլ ուսումնական հաստատությունների հետ, որտեղ ևս կան շահագրգիռ	Գևորգ Մարգարյան (ծրագրի ղեկավար)												

	երիտասարդներ:													
2	Վերապատրաստման դասընթացների փուլ Հրավիրված փորձագետների կողմից նախապես մշակված պլանի համաձայն կիրականացվի առողջ սննդակարգի, ֆիզիկական ակտիվության, վնասակար սովորություններից զերծ մնալու և վնասվածքների կանխարգելման գործնական դասընթացներ	Նուրբեկյան Վերիչկա Բաբայան Տիգրան												
3	Աշխատանք ֆոկուս խմբերում Ոչ ֆորմալ կրթական ձևաչափով իրազեկման արշավի համար նյութերի նախապատրաստում, թեմատիկ նյութերի պատրաստում, վերլուծական աշխատանք	Գևորգ Մարգարյան Նուրբեկյան Վերիչկա												
4	Իրազեկման արշավ Հանրային վայրերում (քաղաքային զբոսայգի) հանրային միջոցառումների ժամանակ իրազեկման արշավների կազմակերպում նախապես պատրաստված նյութերի հիման վրա	Գևորգ Մարգարյան												
5	Բակային խաղերի կազմակերպում Ավանդական (վոլեյբոլ, յոթ քար, բատմետոն դարթ և այլն) խաղերի միջոցով խրախուսել երիտասարդների շարունակական	Գևորգ Մարգարյան Արմեն Շիրինյան												

	ֆիզիկական ակտիվությունը, ինչպես նաև բակերում ևս իրականացնել իրազեկման արշավներ													
6	Հաշվետվության ներկայացում	Գևորգ Մարգարյան												

Ծրագրի շահառուները ու շահագրգիռ կողմերը

Ովքեր են ծրագրի ուղղակի շահառուները: Նկարագրեք ծրագրի շահագրգիռ կողմերին և հետաքրքրված խմբերին և նրանց ներգրավվածությունը ծրագրում:

Ծրագրի շահառուներ են հանդիսանում համայնքի երիտասարդները և համայնքի տարածքում գործող ուսումնական հաստատությունների ուսանողները: Ինչպես նաև 26.04.2023թ. «Արարատի երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության և ՀՀ ԿԳՄՍՆ Արարատի Պետական Բժշկական Քոլեջ ՊՈԱԿ-ի միջև կնքվել է համագործակցության հուշագիր: Այնուհետև տեղի է ունեցել հանդիպում-քննարկում ուսանողների և դասախոսական կազմի հետ, ներկայացվել է ծրագիրը և գաղափարն արժանացել է հավանության: Ուսանողներից շատերը մասնակցության հայտ են ներկայացրել ծրագրին: Հանրային վայրերում իրականացվող իրազեկման արշավների և բակային խաղերի ընթացքում զուգահեռ իրականացվող տեղեկատվության տարածմամբ ծրագրի շահառուների շրջանակը ընդգրկուն է:

Ռիսկերի գնահատում

Որոնք են ծրագրի իրականացման հետ կապված հնարավոր ռիսկերը և դրանց հաղթահարման ռազմավարությունը:

Ծրագրի իրականացման փուլում հնարավոր ռիսկերը հավասարակշռված են և ենթակա են հաղթահարման: Նախորդ ժամանակահատվածում իրականացված միջոցառումների ընթացքում առաջացած խնդիրները (covid, պատերազմ, հետպատերազմյան շրջան) կազմակերպության ճկուն քաղաքականության արդյունքում հաղթահարվել են:

Ծրագրի աշխատակազմը

Նկարագրել ներգրավվող և վճարվող աշխատակիցների և/կամ փորձագետների պատասխանատվության շրջանակը՝ համաձայն աղյուսակի.

Հ/Հ	Անուն Ազգանուն	Պատասխանատվության շրջանակը	Աշխատակցի կամ փորձագետի փորձառությունը
1	Գևորգ Մարգարյան	Ծրագրի ղեկավար/համակարգող	Ներկայացված է լրացուցիչ ինքնակենագրականներում և կից հավաստագրերում
2	Վերիչկա Նուրբեկյան	Ծրագրի դասընթացավար, մենթոր խմբերի	Ներկայացված է լրացուցիչ ինքնակենագրականներում և կից հավաստագրերում

		համակարգող	
3	Տիգրան Բաբայան	Ծրագրի դասընթացավար,	Ներկայացված է լրացուցիչ ինքնակենագրականներում և կից հավաստագրերում
4	Արմեն Շիրինյան	Մենթոր/իրազեկման խմբի համակարգող, բակային խաղերի հրահանգիչ	Ներկայացված է լրացուցիչ ինքնակենագրականներում և կից հավաստագրերում

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Արարատի երիտասարդական նախաձեռնությունների
կենտրոն» ՀԿ
Արարատի մարզ, Արարատ խոշորացված համայնք
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510010630650666, ՀՎՀՀ 04233431
araratyouthcenter@gmail.com
Նախագահ՝
Գ. Մարգարյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 4
«25» «03» 2024 թ.
N ԵԴ -06-2024 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____

Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2024 թ.

Կատարող կազմակերպության ղեկավարը՝

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Կատարող կազմակերպության գլխավոր հաշվապահ՝

(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Փաստաթղթերն ընդունեց՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատու՝

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված N 5
«25» «03» 2024 թ.
N ԵԴ-06 -2024 պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N_____

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	
Դրամաշնորհի N	
Դրամաշնորհատու կազմակերպություն	
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

2.6 Խնդրում ենք նշել, ծրագրի ազդեցության վերլուծություն՝ նշելով ծրագրին մասնակից երիտասարդների թիվը,

2.7 միջոցառմանն ընդգրկվելու ցանկություն հայտնած անձանց թվաքանակը,

2.8 միջոցառման իրականացման տարածքային ընդգրկվածությունը,

2.9 միջոցառման արդյունքի հասանելիությունը տարբեր հարթակներում,

2.10 մասնակիցների գոհունակությունը ծրագրի արդյունքներից,

2.11 ծրագրի իրականացման ընթացքում ստեղծված կայուն արժեքները,

2.12 ծրագրի շրջանակներում օրենքով չարգելված այլ աղբյուրներից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված ֆինանսական ծախսերը

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Արարատի երիտասարդական նախաձեռնություններ
կենտրոն» ՀԿ
Արարատի մարզ, Արարատ խոշորացված համայնք
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510010630650666, ՀՎՀՀ 04233431
araratyouthcenter@gmail.com
Նախագահ՝
Գ. Մարգարյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 6
«25» «03» 2024 թ.
N ԵԴ-06-2024 պայմանագրի

Կազմակերպություն	Պետական մարմին
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պետական մարմինը և կազմակերպությունը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ----- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում կազմակերպությունն իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.